



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի

2014թ. մայիսի 21-ի թիվ 16/1 որոշմամբ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ»

Հայաստանի Հանրապետության կառավարության

տարեկան հաշվետվության մասին

### 2013 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել են 1,032,830,760.8 հազ. դրամ: 2013 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 40,981,241.2 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 1,073,812,002.0 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 11 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2013 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը ճշտված ծրագրով կազմել են 34,886,134.0 հազ. դրամ, որից՝ 31,647,527.5 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն են, 3,238,606.5 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր չեն նախատեսվել: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտքը կազմել է 33,252,356.8 հազ. դրամ, որից՝ 31,188,187.3 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 2,060,690.7 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ 3,478.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել են 1,040,182,417.0 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 99.8%, իսկ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել են 1,071,370,604.3 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 103.7%-ը, ճշտված ծրագրի՝ 99.8%-ը: 2013 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.1% (2012 թվականին՝ 23.7%):

Օրենքով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 1,152,619,955.6 հազ. դրամ, 2013 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով, ավելացել է 105,567,440.0 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 34,733,427.7 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը) կազմել է 1,258,187,395.6 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսի) կազմել է 1,223,453,967.9 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 31,915,634.4 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,142,890,354.0 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 99.2%-ը, ճշտված ծրագրի՝ 90.8%-ը: 2013 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 26.8% (2012 թվականին՝ 25.2%):

Օրենքով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 119,789,194.8 հազ. դրամ: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախատեսված պակասուրդը տարվա ընթացքում ավելացել է 64,586,198.8 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 184,375,393.6 հազ. դրամ: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 71,519,749.7 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 59.7%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով նախատեսվածի՝ 38.8%-ը: ՀՆԱ-ի նկատմամբ 2013 թվականի պակասուրդը կազմել է 1.7% (2012 թվականին՝ 1.5%):

2002-2013 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներում կատարված վերլուծությամբ առկա է ՀՀ կառավարությանը փոխանցված լիազորությունների ընդլայնում, որով 2013 թվականին ՀՀ կառավարությունը լիազորվել է լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

### **2013 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ**

2013 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,071,370,604.3 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները): 2013 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2012 թվականի համեմատ աճել են 125,177,259.4 հազ. դրամով կամ 13.2%-ով: 2013 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների

հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 25.1%, 2012 թվականի 23.7%-ի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 1.4% տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2013 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները և պետական տուրքը կազմել են 93.4%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 96.1%, պաշտոնական դրամաշնորհները համապատասխանաբար՝ 1.2% և 1% և այլ եկամուտները՝ համապատասխանաբար՝ 5.3% և 2.9%:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) նախատեսված 975,792,596.5 հազ. դրամից պակաս են մուտքագրվել 2,148,593.6 հազ. դրամով, կամ 0.2%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 973,644,002.9 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 99.8% կատարում: 2013 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 22.8%, նախորդ տարվա 18.1%-ի համեմատ:

Հաշվետվությունում բացակայում են հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնել:

2013 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 27,287,423.7 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 108.6%: 2013 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.5%-ը:

2013 թվականին պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները Օրենքով նախատեսվել են 17,481,300.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 20,038,143.2 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 13,273,711.1 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի և ճշտված ծրագրի համապատասխանաբար՝ 75.9%-ը և 66.2%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական դրամաշնորհները կազմել են 10,833,084.9 հազ. դրամ և կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 62.0%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 60.9%: 2013 թվականին պաշտոնական դրամաշնորհները կազմել են փաստացի եկամուտների 1.2%-ը:

2013 թվականին պետական բյուջեի «այլ եկամուտները» Օրենքով նախատեսվել են 22,268,410.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 52,844,187.6 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 57,165,466.5 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի՝ 256.7%-ը, ճշտված ծրագրի՝ 108.2%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 29,874,834.1 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 134.2%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 119.2%: 2013 թվականին «այլ եկամուտները» կազմել են փաստացի եկամուտների 5.3%-ը:

Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2013 թվականի ընթացքում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահաբաժին են վճարել 726,319.4 հազ. դրամի չափով նախատեսված 760,914.4 հազ. դրամի փոխարեն կամ կատարողականը կազմել է 95.5%:

2013 թվականի ընթացքում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից նախատեսվել էր ստանալ 2,348,303.2 հազ. դրամ տոկոսավճար, սակայն փաստացի ստացվել է 7,139,741.9 հազ. դրամ և կատարողականը կազմել է 304.0%:

### 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 31,915,634.4 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,142,890,354.0 հազ. դրամ, որը կազմում է ճշտված ծրագրի՝ 90.8%-ը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծրագրերի (*գործառնական դասակարգմամբ*) թվաքանակը 652-ն է: Ծրագրերի կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով քսան ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրով նախատեսվել է 22,830,889.7 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,
2. թվով յոթ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը Օրենքով նախատեսվել է 3,908,737.7 հազ. դրամ ճշտված ծրագրով գրոյացվել են,
3. թվով տասնչորս ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 13,167,887.5 հազ. դրամ, ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 3,109,919.1 հազ. դրամի չափով, ինչը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերով, ինչպես նաև թվով մեկ «Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր» ծախսային ծրագրով փաստացի ծախսը կազմել է -1,559,237.6 հազ. դրամ՝ -735.6 հազ. դրամ ավելի ճշտված ծրագրից:
4. թվով երեսունութ ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 20-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 86,679,788.2 հազ. դրամ, մինչդեռ, փաստացի կատարողականը կազմել է 19,570,590.1 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 22.6%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում փաստացի ցուցանիշի ամենամեծ

բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2)» ծրագրում՝ 21,392,018.4 հազ. դրամ,

5. թվով հիսունհինգ ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն, ճշտված ծրագրով նախատեսվել են 102,378,264.1 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 98,321,805.7 հազ. դրամով, կամ ճշտված ծրագրի 96.0%-ով: Այդ հիսունհինգ ծրագրերից քսանութը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 3,006,874.7 հազ. դրամ,

2013 թվականի ընթացքում կատարված ծախսերի (գործառնական դասակարգմամբ) կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 26.0%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 16.5%, պաշտպանություն՝ 15.9%, տնտեսական հարաբերություններ՝ 11.2%, կրթություն՝ 9.0%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 8.0%, առողջապահություն՝ 5.6%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 3.8%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 1.9%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 1.6%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.4%:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններից տասուն նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Տնտեսական հարաբերություններ» բաժնում՝ 66.5%:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը (*տնտեսագիտական դասակարգմամբ*) հետևյալն է. 88.8%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին, իսկ 11.2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

2012 թվականի համեմատ, 2013 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 13.6%-ով: 2013 թվականին ծախսերը Օրենքով նախատեսվել են 1,152,619,955.6 հազ. դրամ: 2013 թվականին փաստացի ծախսերը կազմել են 1,142,890,354.0 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 99.2%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 90.8%-ով:

2013 թվականին պետական բյուջեի ծախսերի 25.8%-ը կամ 294,920,650.6 հազ. դրամը տրամադրվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, 18.8%-ը կամ 215,392,259.4 հազ. դրամը՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը, 18.3%-ը կամ 209,540,731.9 հազ. դրամը՝ այլ ծախսերին, 10.7%-ը կամ 122,816,757.8 հազ. դրամը՝ դրամաշնորհներին, 4.1%-ը տոկոսավճարներին, իսկ 2.2%-ը՝ սուբսիդիաներին:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 122,816,757.8 հազ. դրամի դրամաշնորհներ, որից՝ 117,293,039.4 հազ. դրամը պետական հատվածի այլ մակարդակներին հատկացված ընթացիկ դրամաշնորհներն են (ընդամենը դրամաշնորհների 95.5%-ը), 3,871,410.0 հազ. դրամը (ընդամենը դրամաշնորհների 3.2%-ը) կապիտալ դրամաշնորհներն են, հատկացված պետական հատվածի այլ մակարդակներին, 1,652,308.4 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 1.3%-ը) հատկացվել են միջազգային կազմակերպություններին:

Ընթացիկ դրամաշնորհներից 36,190,958.8 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 24,033,527.3 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել են 32,815,304.6 հազ. դրամ:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 294,920,650.6 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որից 67.2%-ը միայն կենսաթոշակներն են:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է 209,540,731.9 հազ. դրամ, որից 96.7%-ը կամ 202,561,802.0 հազ. դրամը՝ այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2013 թվականին ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները Օրենքով նախատեսվել են 197,400,224.9 հազ. դրամի չափով, բյուջետային տարվա ընթացքում ավելացվել են 22,748,362.1 հազ. դրամով և ճշտված ծրագրով գումարը կազմել է 220,148,587.0 հազ. դրամ: Փաստացի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 127,513,751.0 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 24,305,588.1 հազ. դրամով և 1,557,226.0 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է 221,707,089.0 հազ. դրամ և 1,558,502.0 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են 129,076,467.4 հազ. դրամ և 1,562,716.3 հազ. դրամ:

ՀՀ 2013 թվականին պետական բյուջեի ծախսերի (*գերատեսչական դասակարգմամբ*) վերլուծությունից պարզվել է, որ ընդամենը փաստացի ծախսերից 57.1%-ը բաժին է ընկնում հինգ գերատեսչություններին: Այսպես՝

1. ՀՀ 2013 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 19.6%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 221,378,241.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 223,963,969.9 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 223,574,185.1 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 99.8%-ով: 2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2012 թվականի համեմատ աճել են 1.3%-ով:

2. 2013 թվականին փաստացի ընդամենը ծախսերի մեջ երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին ընկնում է պաշտպանության նախարարությանը՝ 16.0% կամ 182,438,694.3 հազ. դրամ, որն Օրենքով նախատեսվել է 180,932,240.2 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 98.7%-ով:

3. 2013 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 10.4%-ն է, որն Օրենքով նախատեսվել է 129,128,464.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 124,350,671.7 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 118,853,446.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի՝ 92.0%-ը, ճշտված ծրագրի 95.6%-ը:

4. 2013 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի 5.6%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 72,058,208.1 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 71,533,439.4 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել են 64,088,455.1 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 89.6%-ը: 2013 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2012 թվականի համեմատ նվազել են 1.2%-ով:

5. 2013 թվականին փաստացի ընդամենը ծախսերի 5.6%-ը բաժին է ընկել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը: Օրենքով նախատեսվել է հատկացնել 5,919,571.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով 70,196,608.6 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 64,015,055.2 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 91.2%-ը: 2013 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2012 թվականի համեմատ աճել է 831.9%-ով: Նման աճը պայմանավորված է «Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ին» ծրագրով, որը փաստացի կազմում է 62,918,793.4 հազ. դրամ:

2013 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողականն արձանագրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ծախսերի կատարողականում՝ 43.9%, որը պայմանավորված է «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի» և «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի (Տրանշ 2)» նախատեսված ցուցանիշներից պակաս ֆինանսավորման ստացմամբ:

Ըստ Հաշվետվության, 2013 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների

միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 31,915,634.4 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 91.9%-ը:

2013 թվականին արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություններ՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 61.5%-ը,
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 25.9%-ը,
3. ՀՀ առողջապահության նախարարություն՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 5.6%-ը:

2013 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 22,689,262.2 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 21,629,270.1 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 44,318,532.3 հազ. դրամ: 2013 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 43,217,297.5 հազ. դրամ: 2013 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 40.0%-ը ուղղվել է դրամաշնորհներին, ընդ որում, դրամաշնորհների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են «ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» հողվածով կատարված ծախսերը:

2013 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 267,253,908.5 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի և գաղտնի գնումների), սակայն փաստացի վճարվել է 260,481,858.1 հազ. դրամ:

Հաշվետվությունում բացակայում է Օրենքի N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ ԿԲ) 2013 թվականի վարչական ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը, ինչը Վերահսկիչ պալատին հնարավորություն չի տալիս գնահատել հաշվետվությունը՝ հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին Օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կատարման մասով:

### **2013 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ**

2013 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 71,519,749.7 հազ. դրամ: 2012 թվականի համեմատ, 2013 թվականին պակասուրդի մեծությունը աճել է 19.4 տոկոսային կետով: 2012 թվականի համեմատ, 2013 թվականին պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրները աճել է՝ 52.5%-ով, իսկ ներքին աղբյուրները նվազել՝ 286.9%-ով:

2013 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 119,789,194.8 հազ. դրամով: Տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման



մեծությունը ավելացրել է 64,586,198.8 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 184,375,393.6 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 59.7%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 38.8%:

2013 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 55,216,260.5 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը նվազեցվել է 35,992,194.2 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 19,224,066.3 հազ. դրամ: Փաստացի այդ ցուցանիշը կազմել է -10,931,940.8 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ -19.8%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ - 56.9%:

2013 թվականի սեպտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետությունը առաջին անգամ թողարկել է 700 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժույթային պետական պարտատոմսեր՝ յոթ տարի մարման ժամկետով, 6.25% տեղաբաշխման եկամտաբերությամբ և 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ: Պետք է նշել, որ արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկման լիազորություն որևէ մարմին՝ ՀՀ սահմանադրությամբ կամ օրենքներով տրված չէ, առկա է օրենսդրական բաց:

Արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) թողարկումը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված չէր: ՀՀ կառավարությունը 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշմամբ կատարել է տարեկան պլանի ճշտում, որով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի արտաքին աղբյուրներում «արժեթղթերի թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքեր» հոդվածում պլանի ճշտմամբ մուտքերը ավելացրել է 279,889,904.0 հազ. դրամով և տվել է այդ գումարի օգտագործման ուղղությունները: Օգտագործման ուղղություններն են՝

1. Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար վարկի վաղաժամկետ մարում՝ 178.676 մլրդ դրամ:
2. Վարկերի և փոխառություններ տրամադրում՝ 64.728 մլրդ դրամ, այդ թվում՝  
ա) ՀՀ կենտրոնական բանկ՝ 60.828 մլրդ դրամ,  
բ) «ՓՄՉ ներդրումներ» ՈԻՎԿ՝ 3.9 մլրդ դրամ:
3. «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կապիտալում ներդրումներ՝ 1.95 մլրդ դրամ,
4. Կայունացման դեպոզիտային հաշվի համալրում՝ 24.535 մլրդ դրամ,
5. 10. 0 մլրդ դրամ ուղղվել է դեֆիցիտի ֆինանսավորմանը, քանի որ այդ գումարի չափով կրճատվել է պետական պարտատոմսերի հաշվին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը:

ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշմամբ արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխման արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների օտագործման ուղղություններում 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1126-Ն, դեկտեմբերի 12-ի թիվ 1375-Ն և դեկտեմբերի 26-ի թիվ 1517-Ն որոշումներով կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Արդյունքում փոփոխվել և լրացվել են՝

- Վարկերի և փոխառություններ տրամադրում՝ 32.006 մլրդ դրամ, այդ թվում՝

ա) ՀՀ կենտրոնական բանկ՝ 8.0 մլրդ դրամ:

բ) «ՓՄՁ ներդրումներ» ՌԻՎԿ՝ 3.9 մլրդ դրամ: Պետք է նշել, որ բյուջետային վարկը տրամադրվել 2013 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը ՀՀ դրամով, 7 (յոթ) տոկոս տոկոսադրույքով: Բյուջետային վարկի մարումը և դրա օգտագործման գծով հաշվարկված տոկոսների վերադարձը կատարվելու է ՀՀ դրամով՝ առանց որևէ այլ արտարժույթի համեմատ ինդեքսավորման, այսինքն՝ արտարժույթային ռիսկը մնում է ՀՀ կառավարության վրա:

գ) «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ՝ 10.0 մլրդ դրամ:

դ) Բյուջետային վարկ (գաղտնի)՝ 10.106 մլրդ դրամ:

- Կայունացման դեպոզիտային հաշվի համալրում՝ 67.363 մլրդ դրամ, այդ թվում՝  
ՀՀ կառավարության հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշմամբ՝ 24,535 մլրդ դրամ,  
ՀՀ կառավարության հոկտեմբերի 17-ի թիվ 1126-Ն որոշմամբ՝ 32,442 մլրդ դրամ,  
ՀՀ կառավարության դեկտեմբերի 26-ի թիվ 1517-Ն որոշմամբ՝ 10.386 մլրդ դրամ:

Ըստ պայմանագրի, Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար վարկը պետք է մարվեր 2013 թվականի հունիսի 15-ից և վերջին վճարումը պետք է լիներ 2024 թվականի հունիսի 15-ը: Սակայն ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշմամբ որոշվեց վաղաժամկետ մարել 2014-2024 թվականների ընթացքում նախատեսված ՌԴ-ի վարկի մարման գումարները՝ 456.52 մլն ԱՄՆ դոլարը: Վաղաժամկետ մարման համար, որպես հիմնավորում բերվում է, որ կնվազի լողացող տոկոսադրույքով տրամադրված վարկերից բխող ռիսկերը (30.08.2013 թվականի դրությամբ ռուսական վարկի տեսակարար կշիռը ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքում կազմել է 15.6%): Վաղաժամկետ մարումը իրականացվել է 2013 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված արտարժույթով պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխման մուտքերի հաշվին և 2013 թվականի հոկտեմբերի 10-ին մարվել է ՌԴ-ի վարկի 456.52 մլն ԱՄՆ դոլարը (178.676 մլրդ դրամ):

Մեր կարծիքով, արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխման հաշվին միջոցների ներգրավումը և դրանց օգտագործման

արդյունավետությունը բավարար հիմնավորման անհրաժեշտություն ունի (ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշման տեղեկանք հիմնավորում): Քանի որ՝

- եթե ՌԳ-ի վարկի վաղաժամկետ մարման պատճառը տրամադրված վարկերից բխող ռիսկերի նվազեցումն է, ապա արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխումը նույնպես ռիսկային է: ՌԳ-ի վարկի տոկոսադրույքը՝ LIBOR + 3% տարեկան դրույքաչափ է (ՌԳ-ի վարկի պայմանագրի ստորագրումից 2009 թվականից հետո մինչ օրս LIBOR-ի ամենաբարձր տոկոսադրույքը 1.18 է եղել, իսկ 02.01.14թ. դրությամբ՝ 0.346%), իսկ արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) եկամտաբերությունը 6.25% է: Արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) թողարկման օրը՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ին, շուկայում ձևավորված գների պայմաններում ՌԳ-ի վարկի տոկոսադրույքը համարժեք էր 5.89%-ին, որը 0.36%-ով ավելի ցածր է, քան արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխման փաստացի եկամտաբերությունը: Իսկ ՌԳ-ի վարկի վաղաժամկետ մարման օրը՝ 2013 թվականի հոկտեմբերի 10-ին, ՌԳ-ի վարկի տոկոսադրույքը համարժեք էր 5.86%-ին, որը 0.39%-ով ավելի ցածր է եղել:
- Ըստ տեղեկանք-հիմնավորման, վաղաժամկետ մարման արդյունքում, տաս տարիների ընթացքում 44 մլն ԱՄՆ դոլարով կնվազի ՀՀ արտաքին պետական պարտքի մայր գումարի մարումը, որը չի կարելի դիտարկել որպես աներկբա դրական արդյունք, քանի որ երկրի տնտեսության համար պարտքի սպասարկման ավելի թեթև բեռ կարող է լինել, եթե պարտքը տաս-տասնմեկ տարիների ընթացքում սպասարկվի հավասարաչափ, քան մեկ տարում միանգամից (Աղյուսկ 1, Գծապատկեր 1): Արտարժույթով պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) մարումը նախատեսված է 2020 թվականին և ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման կանխատեսման ՀՀ արտաքին պետական պարտքի մարումը և տոկոսավճարները կկազմեն 1.057 մլրդ ԱՄՆ դոլար, որի արդյունքում մեծանում է վերաֆինանսավորման ռիսկերը:


2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկին է տրամադրվել 60.828 մլրդ դրամի չափով բյուջետային վարկ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը մարման ժամկետով, տարեկան 7% տոկոսադրույքով: ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշման տեղեկանք հիմնավորման մեջ նշվում է, որ նախատեսվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով ընդլայնվի տնտեսության վարկավորման ծրագիրը 60.828 մլրդ դրամի չափով: Վերլուծությունից պարզվեց, որ ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ կառավարությանը չի դիմել նման ծրագրի իրականացման համար բյուջետային վարկավորման անհրաժեշտության հարցով: Այդ իսկ պատճառով, ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1069-Ն որոշման արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրոբոնդերի) տեղաբաշխման արդյունքում ՀՀ պետական բյուջե

**ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման վերաբերյալ\***

մլն ԱՄՆ դոլար

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Տոկոսավճար և մարում 2013թ.	90.98	101.61	239.42	861.27	273.11	196.84	229.36	264.75	299.12	345.07	1,057.42	318.13	287.30	273.02	248.18
Տոկոսավճար և մարում 2012թ.	90.98	101.61	239.43	419.77	298.56	211.26	235.45	272.05	296.95	319.99	322.46	315.90	284.60	262.12	227.25

Գծապատկեր 1



\*. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2012 և 2013 թվականների ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման կանխատեսումների:

2012թ.- 6-months LIBOR USD-1.5, 6-months EURIBOR USD-1.5, SDR rate- 1.2 , 1 SDR=1.539 USD, 1 EUR=1.2939USD , 1 JPY=0129USD, 1 AED=0.2729 USD, IBRD spread=0.46 , ADB spread=0.30

2013թ.- 6-months LIBOR USD-0.7, 6-months EURIBOR USD-0.8, SDR rate- 1.2 , 1 SDR=1.547 USD, 1 EUR=1.378 USD , 1 JPY= 0.010USD, 1 AED=0.272 USD, IBRD spread=0.47 , ADB spread=0.70

մուտքագրված գումարների օտագործման ուղղություններում 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1126-Ն, դեկտեմբերի 12-ի թիվ 1375-Ն և դեկտեմբերի 26-ի թիվ 1517-Ն որոշումներով կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Այդ փոփոխությունների արդյունքում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվելիք 60.828 մլրդ դրամի չափով բյուջետային վարկը՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը մարման ժամկետով, տարեկան 7% տոկոսադրույքով, փոխարիվել է 8.0 մլրդ դրամի չափով բյուջետային վարկի՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը մարման ժամկետով, տարեկան 6.25% տոկոսադրույքով:

Համաձայն Հաշվետվության, 2013 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 24,658.8 մլն դրամ, այդ թվում՝ -12,870.0 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, որից՝

60,597.3 մլն դրամ՝ Կենտրոնական գանձապետարանում դեպոզիտի փոփոխություն,

2,963.5 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

-27.7 մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,

-621.1 մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

3,794.9 մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,

-79,576.9 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

105,400.0 մլն դրամ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

25,823.1 մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ 775.9 մլն դրամ՝ միջանկյալ հաշիվի փոփոխություն,

-686.6 մլն դրամ՝ հաշվետու ժամանակաշրջանում տարեսկզբի ազատ մնացորդին մուտք,

-1,475.8 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների տարեսկզբի մնացորդից օգտագործում,

1,755.3 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2014 թվականի տարեսկզբի պետական ընդհանուր ռեսուրսները կազմել են 79,415.5 մլն դրամ:

2013 թվականին Օրենքով նախատեսվել է Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստանալ 172,249,756.8 հազ. դրամ արտաքին վարկ, սակայն տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 172,367,024.5 հազ. դրամ: 2013 թվականին արտաքին վարկերի և փոխատվությունների ստացումը փաստացի կազմել է 91,115,549.5 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 52.9%-ը:

2013 թվականին Օրենքով արտաքին վարկերի մասով նախատեսվել է մարել 67,852,283.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 246,528,726.5 հազ. դրամ և փաստացի մարվել է 246,355,621.5 հազ. դրամ: Կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 99.9%:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր կատարվում: 2013 թվականին արդեն բոլոր ԾԻԳ-երի հաշիվները գտնվում են գանձապետական միասնական հաշվում և 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԾԻԳ-երի հաշիվների մնացորդը կազել է 10,050.3 մլն դրամ:

Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ՝

1. Գանձապետարանը ԾԻԳ-երի հաշիվների նկատմամբ իրականացնի նախնական հսկողություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև ««Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Պետք է նշել, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին կատարվել է փոփոխություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետում և արդեն, ըստ օրենքի, Գանձապետական միասնական հաշիվը ներառում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ արդեն մեկ տարի է ինչ կատարվել է այդ փոփոխությունը, մինչ օրս ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվում են առևտրային բանկերում:

### **2013 թվականի ՀՀ պետական պարտք**

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,588.5 մլն ԱՄՆ դոլար (1,861.3 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,899.1 մլն ԱՄՆ դոլար (1,581.6 մլրդ դրամ), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 689.4 մլն ԱՄՆ դոլար (279.6 մլրդ դրամ): 2013 թվականի ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 85.0%, ՀՀ ներքին պետական պարտքը՝ 15.0%: Այսինքն՝ 2012 թվականի համեմատ, 2013 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 0.5 տոկոսային կետով:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի

Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 60%-ը»։ 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2012 թվականի ՀՆԱ-ի 46.6%-ը, այսինքն՝ պահպանվել է օրենքի նշված կետի պահանջը։ Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը նվազել է 0.1 տոկոսային կետով։

### 2013 թվականի ՀՀ ներքին պետական պարտքը

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը կազմել է 279.6 մլրդ դրամ (689.4 մլն ԱՄՆ դոլար)՝ նախատեսված 288.0 մլրդ դրամի (710.3 մլն ԱՄՆ դոլար) փոխարեն։ 2013 թվականին ներքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 24.2 մլրդ դրամով կամ 9.5%-ով։

2013 թվականի ներքին պետական պարտքի կառուցվածքը հետևյալն է՝

1. 273.5 մլրդ դրամը կամ 97.8%-ը՝ պետական գանձապետական պարտատոմսեր,
2. 3.2 մլրդ դրամը կամ 1.2%-ը՝ ՀՀ ռեզիդենտներից վարկեր և փոխառություններ ,
3. 1.9 մլրդ դրամ կամ 0.7%-ը՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր,
4. 1.0 մլրդ դրամը կամ 0.4%-ը՝ ներքին երաշխիքներ։

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

1. 2013 թվականին նախատեսվում էր տեղաբաշխել 137.8 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր և մարել 95.7 մլրդ դրամի պարտատոմսեր։ Փաստացի տեղաբաշխվել է 110.9 մլրդ դրամի պարտատոմսեր և մարվել 83.7 մլրդ դրամի պարտատոմսեր։

2013 թվականի շրջանառության մեջ եղած պետական **գանձապետական պարտատոմսերի** ծավալը կազմել է 274.2 մլրդ դրամ, որից.

- կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 22.9 մլրդ դրամ կամ 8.3%, 2012 թվականին նույն ժամանակահատվածում՝ 37.4 մլրդ դրամ կամ 15.0%,
  - միջնաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 147.4 մլրդ դրամ կամ 53.8%, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ 128.8 մլրդ դրամ կամ 51.6%,
  - երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 102.8 մլրդ դրամ կամ 37.5%, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ 82.7 մլրդ դրամ կամ 33.1%,
  - խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը կազմել է 1.1 մլրդ դրամ կամ 0.4%, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ 0.9 մլրդ դրամ կամ 0.3%։
2. 2013 թվականին պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1901 օր (ՊԿՊ-94 օր , ՄԺՊ-754 օր, ԵԺՊ-3963 օր, ԽԱՊ - 511 օր),

3. Միջին կշռված եկամտաբերությունը 14.0% է, որը 2012 թվականին կազմել է 13.6%,
4. Մարման բեռի բաշխվածությունը 2032 թվականն է,
5. 2013 թվականի պետական գանձապետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի փաստացի ֆինանսավորումը կազմել է 20.4 մլրդ դրամ՝ նախատեսված 30.2 մլրդ դրամի փոխարեն (ճշտված պլանը -20.2 մլրդ դրամ):

2013 թվականին ստացված վարկերի և փոխատվությունների մարման մասով 1.6 մլրդ դրամի չափով «ՎՏԲ -Հայաստան Բանկ» ՓԲԸ- ից ստացված վարկի փաստացի մարում է եղել՝ որի կատարողականը նախատեսվածի նկատմամբ կազմել է 100%:

2013 թվականին ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 29.9 մլրդ դրամ կամ նախատեսված ցուցանիշի 99.8%-ը, որից 29.7 մլրդ դրամը (99.3%) միայն պետական պարտատոմսերի գծով սպասարկման ծախսն է: Հաշվետու տարվա ընթացքում աճ է նկատվել ներքին պարտքի սպասարկման ծախսերում, որը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով: Նախորդ տարվա համեմատ ներքին պարտքի սպասարկման ծախսը աճել է 6.7 մլրդ դրամով կամ 28.8%-ով:

### **2013 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքը**

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,899.1 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 3,390.8 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունն է, իսկ 508.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ)՝ պարտավորությունը: 2013 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը 2012 թվականի համեմատ աճել է 160.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 4.3%-ով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու դեպքում), ՀՀ արտաքին պարտքը գազաթնակետին կհասնի 2016 թվականին՝ 4,245.0 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

### **2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները**

2013 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ստացումները (մասհանումներ) կազմել են 1,009.6 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարությունը ստացել է 913.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԿԲ-ը՝ 96.1 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության ստացումները 2013 թվականին նախորդ տարվա համեմատ ավելացել են 209.4%-ով:

2013 թվականին ՀՀ կառավարության ստանձնած 913.5 մլն ԱՄՆ դոլար (371,005.5 մլն դրամ) արտաքին պարտավորություններից (մասհանում) 223.3 մլն ԱՄՆ դոլարը, կամ 24.4%-ը



արտաքին վարկերի գծով ստացումներն են, իսկ 690.2 մլն ԱՄՆ դոլարը կամ 75.6%-ը՝ արտարժույթով պետական պարտատոմսերից ստացումները: Արտաքին վարկերի գծով կատարված փաստացի մասհանումները կազմում են ծրագրվածի 52.9%-ը:

Արտաքին վարկերի գծով կատարված մասհանումներից.

- 91.3%-ը կամ 203.9 մլն ԱՄՆ դոլարը միջազգային կազմակերպությունների գծով մասհանումներն են, որում գերակշռում են թվով 3 կազմակերպություններից ստացումները՝ Վերակառուցման և Չարգացման Միջազգային բանկ՝ 75.6 մլն ԱՄՆ դոլար (37.0%), Չարգացման Միջազգային Ընկերակցություն՝ 56.2 մլն ԱՄՆ դոլար (27.6%), Ասիական Չարգացման Բանկ՝ 39.5 մլն ԱՄՆ դոլար (19.4%):

- 8.7%-ը կամ 19.4 մլն ԱՄՆ դոլարը՝ օտարերկրյա պետությունների գծով կատարված մասհանումներն են, որից միայն 12.2 մլն ԱՄՆ դոլարը կամ 63.0%-ը գերմանական KFW-ի գծով մասհանումներն են:

2013 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ին տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները կազմել են 96.1 մլն ԱՄՆ դոլար, որից՝

- 82.8 մլն ԱՄՆ դոլարը կամ 86.2%-ը տրամադրել է Արժույթի Միջազգային Հիմնադրամը (Extended Fund Facility – EFF և Extended Credit Facility – ECF վարկային ծրագրերով),

- 13.3 մլն ԱՄՆ դոլար կամ 13.8%-ը՝ Գերմանիան (KFW) (Հիպոթեքային շուկայի զարգացման աջակցության III ծրագիր՝ 3.9 մլն ԱՄՆ դոլար, Վերականգնվող էներգիայի զարգացման II ծրագիր՝ 9.4 մլն ԱՄՆ դոլար):

2013 թվականի տարեվերջին ՀՀ արտաքին պետական վարկերի 35.6%-ը ոչ արտոնյալ վարկերն են: 2013 թվականի տարեվերջին արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը ՀՀ արտաքին պետական վարկերի մեջ կազմել է 64.4%: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2013 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական վարկերի մեջ առկա է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի կտրուկ աճ: 2012 թվականին 2011 թվականի համեմատ արտոնյալ վարկերը նվազել են 2.1 տոկոսային կետով, իսկ 2013 թվականին 2012 թվականի համեմատ արտոնյալ վարկերը աճել են 8.9 տոկոսային կետով:

2013 թվականին ՀՀ կառավարությունը արտաքին վարկերի գծով ստացել է 223.3 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ոչ նպատակային վարկերի գծով՝ 82.0 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուրի 36.7%-ը, իսկ նպատակային վարկերի գծով՝ 141.3 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուրի 63.3%-ը: Ստացված ոչ նպատակային վարկերի 82.0 մլն ԱՄՆ դոլարը և արտարժույթով պետական պարտատոմսերի 690.2 մլն ԱՄՆ դոլարը մուտքագրվել են ընդհանուր պետական ռեսուրսներ և բյուջետային տարվա ընթացքում ուղղվել են բյուջետային ծախսեր կատարելուն, դեֆիցիտի ֆինանսավորմանը: 2012 թվականին 2013 թվականի համեմատ ՀՀ կառավարությունը 2.1 անգամ ավելի ոչ նպատակային վարկեր է ստացել:

## 2013 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը

2013 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսը կազմել է 861.3 մլն ԱՄՆ դոլար (811.0 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 50.2 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճարներ), որից՝ ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի սպասարկումը կազմել է 665.9 մլն ԱՄՆ դոլար (42.0 մլն ԱՄՆ դոլարը՝ տոկոսավճարներ և 624.0 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 195.3 մլն ԱՄՆ դոլար (8.3 մլն ԱՄՆ դոլարը՝ տոկոսավճարներ և 187.0 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում): ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի սպասարկումը 440.5 մլն ԱՄՆ դոլարով կամ 195.4%-ով գերազանցում է Օրենքով սահմանված ցուցանիշը:

2013 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի վճարված տոկոսավճարները 14.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 25.9%-ով պակաս է Օրենքով նախատեսված ցուցանիշից: 2013 թվականին վճարված 42.0 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով տոկոսավճարներում 21.9 մլն ԱՄՆ դոլարը կամ 52.3%-ը միջազգային կազմակերպությունների գծով տոկոսավճարներն են, որում գերակշիռ մասը կազմում են Ջարգացման միջազգային ընկերակցության կողմից տրամադրված վարկերի գծով տոկոսավճարները՝ 9.7 մլն ԱՄՆ դոլար (44.4%): ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներում մնացած 20.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 47.7%-ը օտարերկրյա պետությունների գծով տոկոսավճարներն են, որում 14.2 մլն ԱՄՆ դոլարը կամ 70.8%-ը միայն Ռուսաստանի Դաշնության 500 մլն ԱՄՆ դոլարի պետական վարկի գծով տոկոսավճարներն են: Եվ ընդհանրապես, ողջ 2013 թվականի ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներում ՌԴ-ի 500 մլն ԱՄՆ դոլարի պետական վարկի գծով վճարված տոկոսավճարները կազմում են 33.8%: 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն դրամ) պետական վարկի միջոցների հաշվին բյուջետային վարկերի տրամադրումը տնտեսավարող սուբյեկտներին կազմել է 127,414.1 մլն դրամ: 2009-2013 թվականների ընթացքում Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձը կազմել է 53,179.5 մլն դրամ:

2013 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի մարումները 455.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 269.6%-ով գերազանցում են Օրենքով նախատեսված մակարդակը: 2013 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի մարումները կազմել են 624.0 մլն ԱՄՆ դոլար, որից 508.8 մլն ԱՄՆ դոլարը կամ 81.5%-ը օտարերկրյա պետությունների գծով մարումներն են, որից 500.0 մլն ԱՄՆ դոլարը կամ

98.3%-ը միայն կազմում են ՌԳ-ի 500 մլն ԱՄՆ դոլարի պետական վարկի մարմանն ուղղված գումարները (վարկի ողջ գումարը ամբողջությամբ մարվել է 2013 թվականին): Սակայն, վարկային համաձայնագրի համաձայն, ռուսական վարկը ենթակա էր մարման 2013 թվականից մինչև 2024 թվականը ներառյալ՝ յուրաքանչյուր տարի 43.5 մլն ԱՄՆ դոլար հավասար մասնաբաժիններով:

2013 թվականին ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի գծով մարումների ընդհանուր գումարից 115.2 մլն ԱՄՆ դոլարը կամ 18.5%-ը միջազգային կազմակերպությունների գծով մարումներն են, որից 91.9 մլն ԱՄՆ դոլարը կամ 79.7%-ը Արժույթի միջազգային հիմնադրամի Stand-by Arrangement վարկային ծրագրի գծով մարումներն են:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2014, 2015 թվականներին ՀՀ արտաքին պետական պարտքը մարելու և տոկոսավճարները իրականացնելու համար անհրաժեշտ կլինի համապատասխանաբար 273.1 և 196.8 մլն ԱՄՆ դոլար, կամ 3.2 և 4.4 անգամ քիչ, քան 2013 թվականին, որից հետո սպասարկման ծախսը աստիճանաբար կավելանա և «պիկին» կհասնի 2020 թվականին՝ կազմելով 1,057.4 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության սպասարկումը «պիկին» կհասնի 2020 թվականին, կազմելով 973.5 մլն ԱՄՆ դոլար:

### **ՀՀ արտաքինպետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները**

2013 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 37.4% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը: Երեք ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր, մեկ ցուցանիշով միջին պարտքի բեռ ունեցող երկիր է և մեկ ցուցանիշի արդյունքով Հայաստանը դասակարգվել է առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրների խմբում (Աղյուսակ 2):

Համաձայն 2012 թվականի նկատմամբ 2013 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության գործոնային վերլուծության արդյունքների հաշվետու տարում տրամադրված արտաքին վարկերի արտարժույթի և ԱՄՆ դոլարի փոփոխության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է բացասական 44.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ տրամադրված արտաքին վարկի ստացման և մարման գումարների տարբերության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է բացասական 491.3 մլն ԱՄՆ դոլար:

**Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները**

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ	
		2012	2013
<b>ԶՆԱ/ՀՆԱ</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >80%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ < 48%	34.2%	35.9%
<b>ԶՆԱ/ Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >220%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%	133.4%	133.6%
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <132%		
<b>Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >30%		30.8%
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 18%-30%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <18%	9.4%	
<b>Տոկոսավճար /Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ > 20%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 12%-20%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <12%	2.2%	1.8%
<b>Արտաքին պետական պարտք/ Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >275%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 165%-275%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <165%	146.4%	139.2%
<b>Արտաքին պարտք/ՀՆԱ</b>	Սահման 50.00%	37.6%	37.4%
<b>ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ</b>		10.2%	32.9%

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան

հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: